

Թիւնը կը հաստատէր Մուրատ-Ռափա-
յէլեան վարժարանը, յատուկ առանձնա-
շնորհութեամբ Միլիթարեան Միաբանու-
թեան, որ իր սիրելի և երախտագէտ սա-
նին մէջ կը տեսնէր խոստումնալից ա-
րուեստագէտ մը, որ արժանի էր ամէն
քաջալերանքի և ամէն աջակցութեան :
Եղուարդ Եփրեմեան կը դառնար այսպէս
Վենետիկ, այն զեղարուեստական քա-
ղաքը, լոյսի ու գոյնի և երաժշտութեան
քաղաքը, որ խոր տպաւորութիւններ թո-
ղած էր արդէն անոր երեւակայութեան
մէջ : Երկար չտեսնեց ընթացքը, մանաւանդ
թէ պահանջուածէն շատ կարճ. տասնը-
չորս ամսուան մէջ մնացած եօթը տարի-
ներու ուսումը լրացուց իր նախասի-
րած փրոֆէսորին՝ Լեթթորէ Գասսելլարիի
ձեռքին տակ, և 1951 Յունիս 25-ին
վերջնական քննութիւնը տալով՝ ամենամեծ
յաջողութեամբ աւարտեց և ստացաւ իր
Վկայականը : Այդ վերջնական քննութեան
նիւթերը կ'ընտրէր Պախէն, Մոզարթէն,
Վիվալտիէն, Պէթովէնէն, Գորելլիէն, Բա-
կանինիէն, Թարթինիէն, Մարքս Պրիւքէն,
Ֆրանչեսքոյ Կուարնիէրիէն : Քննութեան
յանձնախումբին նախագահ՝ Լուիճի Ֆերրոյ
փրոֆէսորը կը գտնէր նորաստեղծ փրո-
ֆէսորին քով բացառիկ տաղանդ մը, որ
իր մէջ կը միացնէր գիտակից « Թէքնիք »-ի
մը հետ՝ արեւելցիի ուժեղ զգայնութիւնը :

Հիմա որ ան վերադարձած է արդէն
Եգիպտոս՝ վայելելու իր աշխատութիւն-
ներուն պտուղը, կը մաղթենք իրեն փայ-
լուն ասպարէզ մը նորանոր նուաճու-
մաներու :

Հ. Մ. Ճ.

ՓՐՈՖ. ԱԳՆԷՍ ՄԻԼՏՈՆԵԱՆ

Այս տարի « Պէնէտէթթոյ Մարչելլոյ »
Վենետիկի Երաժշտանոցէն շրջանաւարտ
կ'ելլէր նաեւ Օր. Ագնէս Միլտոնեան :
Շնորհալի օրիորդը իր տասնեւինամեայ



Փրոֆ. Օր. Ագնէս Միլտոնեան

տարիքին մէջ փայլուն յաղթանակ մ'էր
որ կը տանէր, ուրախութիւն պատճառե-
լով իր ծնողներուն, ազգականներուն և
բոլոր ծանօթներուն : Օր. Ագնէս կը ստա-
նար Դաշնակահարուհիի վկայականը ինը
տարուան ընթացքէ մը վերջ, մտնելով
1942-ին Վենետիկեան Երաժշտանոցը,
տարի մը առանձնական դասեր առնելէ
յետոյ իր հայրենի տան մէջ : Դաշնամուրի
իր ուսուցչապետը եղած է անուանի Ճինոյ
Կորինի, որ իր աշակերտուհիին մէջ գտած
է եզական ձիրք մը, և հոգեկան լայն
տրամադրութիւն մը երաժշտութեան հան-
դէպ : Վերջնական քննութեան որ տեսած
է ժամ մը, հայ օրիորդը նուազած է.
Bach-Busoni-ի « Fantasia cromatica
e Fuga »-ն, Ravel-ի « Sonatina »-ն, Cho-
pin-ի « Notturmi », op. 27. n. 1. 2; op. 32.
n. 1, Saint-Saëns-ի Les cloches de las
palmas, Béla Bartók-ի « Suite » op. 14,

Յանձնախումբի մը առջեւ որ կը կազմուէր
Ճինոյ Կորինի, Սերճիոյ Լորենցի, Էուճե-
նիոյ Պանեոլի և Էլէոնորա Փախի փրո-
ֆէսորներէն :

Օր. Ագնէս, զաւակն է Մ. Ռ. Նախկին
սան պր. Արտաւազ և տիկին Վիրգինէ
Միլտոնեաններուն, Վենետիկի փոքրաթիւ
հայ զաւուրի պատուական ընտանիքնե-
րէն, ուր երաժշտութիւնը օրուան ամենա-

սիրելի զբաղանքն է տան փոքրերուն :
Շրջանաւարտ օրիորդին միւս քոյրերն ալ,
մին թաջութակի և միւսը տաւիղի հետ
կապած իրենց սիրտն ու միտքը, պիտի
հետեւին իրենց երէց քրոջ օրինակին :

Զերմագին խնդակցութիւններ Օր. Ագ-
նէսին և իր ընտանեկան պարագաներուն :

Հ. Մ. Ճ.

ՏՐՏՈՒՄ Է ՀՈԳԻՍ

Ինչքան տրտում է, Աստուած իմ, եւ ցուրտ հոգիս,
Սա բագմաւորս փողոցներէն վերադարձիս.
Իմ մէջ աշխարհ մը կայ ինձի միշտ անձանօք,
Որուն ո՛րքան մտեմանամ՝ ա՛յնքան է աղօտ :

Աղօտ ու մռայլ գիշերիս մէջ ես սիրակամ՝
Առանց յոյսի մ'աչքերուս խորն՝ ահա՛ կ'երբամ
Տառապանքի սա լըպըրծուն ուղիներէն,
Որ ո՛վ գիտէ ո՞ւր պիտ' յանգին տարտամօրէն :

Ուղին լայն է, ժըխորն հսկայ ու տարփագին,
Որուն անգէտ հետեւեցայ խուլ հոսանքին,
Հիմա որ ա՛լ դարձած եմ ես իմ կայանիս,
Դեռ կը զգամ տենդն անոր՝ որ հեւք կու տայ կուրծքիս :

Հոգեհանգի՛ստն, ա՛հ, կ'երանեմ ես յաւիտեան,
Խաղա՛ղ, անկիր՝ ո՛չ ծոցին մէջ դաժան մահուան.
Հոգեհանգիստ մը որ բանայ ինձ լայնարձակ
Խորհող մտքիս հորիզոններն անպատրուակ :

Ո՛հ, այն ատեն կ'ապրիմ, կ'ապրիմ ես իսկապէս
Ե՛ւ տենդն հոգին, ե՛ւ սէր մարդուն՝ Արարչին պէս,
Որ հեռու է եւ մօտ, մեր մէջ իսկ ներգործող :
Մարդէն հեռու, կը սիրեմ ես մարդն առինքնող :

ԱՐՄԱՆԻՐԵԱՆ